

Մինչև 2016թ.-ի դեկտեմբերի 16-ը «Ուսումնական ձևեր» նախագծի հրապարակում դասավանդողի լոգում բլոգներում:

Նախագծի ուղղությունները.

1. Ձևեռային ընթերցանություն՝ ըստ դասավանդողի առաջարկած ցանկի և առաջադրանքների
2. Ձևեռային ընթերցանություն՝ ըստ սովորողի նախասիրության և իր առաջարկած ցանկի
3. Նախագիծ՝ «Ամանորյա անցուդարձ»՝ պատումներ, տեսագրություններ, ձայնագրություններ Ամանորի, տոնական օրերի, արձակուրդային շրջանի մասին
4. Անհատական, խմբային իրականացվող նախագծերի շարունակություն
5. Դիջիտալ նյութերի պատրաստում
6. Դասավանդողի կողմից՝ ըստ դպրոցի կազմած ժամանակացույցի, գլխավոր կայքի, ենթակայքի սպասարկում:

Դեկտեմբերի 16-ից դեկտեմբերի 26-ը՝ ըստ դասավանդողի ներկայացրած նախագծի, սովորողների՝ «Ուսումնական ձևեր» նախագծի հրապարակում իրենց բլոգներում:

Դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների կազմակերպման մասին մասնախմբերի ղեկավարների հաղորդումը

Հանրապետական առարկաների օլիմպիադաների ո՛չ բովանդակությունը, ո՛չ կազմակերպումը չի համապատասխանում մեր ծրագրային և մանկավարժական մոտեցումներին:

Սակայն սովորողի իրավունքն է տեղեկացված լինելու և, ցանկության դեպքում, մասնակցելու դրանց:

Ուստի առաջարկում եմ, օլիմպիադաների մասին նախօրոք տեղեկացնել սովորողներին՝ ներկայացնելով օլիմպիադաների և՛ բովանդակային ուղղվածությունը, և կազմակերպումը: Ցանկացողներին, որպես լրացուցիչ կրթություն, պատրաստել օլիմպիադաներին մասնակցելուն: